

Ք Ս Ո Ւ Ե Ս Կ Ն Ե Ր

(Շար. Բազմ. 1971, ք. 1-2, էջ 137-140)

Գրեց՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Իմ քընարը, ո՛վ դալիքներ, սարսափելի դարով անցաւ,  
Աքտորանքի դողդոթայով, հազար դերի սարով անցաւ,  
Կողպեք դըրին իմ բերանին, բայց նա հաււեց երգիս հրով,  
Կեանքս՝ դերի Արազի պէս յոյսի շիրմաքարով անցաւ:



Տես՝ դըրիչ է ձեռքիս դառել անշէջ թուրը Վարդանի,  
Մինչեւ չընկնեմ Աւարայրում՝ թուրըս պատեան չեմ դընի,  
Սարսափում եմ տանը, բարձիս անխառունակ մեռնելուց,  
Տղմուտի պէս՝ ի սէք ազգիս՝ ես յաւիտեան չեմ քընի:



Արի տանեմ քեզ երազիս աւազանը, նազելիս,—  
Գաւես մեղքըդ, ըմպէս սիրոյ սրբազանը, նազելիս,  
Սուրբ համբոյրիս աւազանը քարաւանի քեզ այնպէս,  
Որ սրբանաս, ինքըդ խեղդես քո դազանը, նազելիս:



Ով կեանք, դու իմ մանկութիւնը ջուր ծախողի կուժ ես արել,  
Կեանքիս բոլոր ճամբաները մի վարդ, հազար փուշ ես արել,  
Ուշ ես բերել դէժ ժըպիտըդ՝ բանաստեղծի դահն ինձ տալով,—  
Խնդութիւնըս մի Երեւան, վիշտըս՝ Մասիս, Մուշ ես արել...



Ունայնախօս չարն ինձ ասաց՝ բաւ է Մասիս երգես, պոէտ,  
Երբ աղատւի՝ կը մոռցըւեն քո երգերն էլ հայ վշտի հետ,  
Թող մոռացւեմ, ով չարախօս, շիրմապէր էլ թող չունենամ,  
Միայն թէ հայ հողն աղատւի՝ թող անունս էլ կորչի անհետ...



Մարմինը դանդ, սիրտը լեզուակն է դանդի,  
Առանց լեզուակ մարմինդ լճնչպէս ինձ դանդի,  
Սրտի մէջ է, սրտի մէջ է, ինչ որ կայ,—  
Մարմինը՝ ձոր, սիրտըն՝ Հրազդան, հուր դանդի...



Բարև գիշեր են միշտ ասում մարդիկ իրար, բարև գիշեր,  
Քանդի կեանքը լիքն է չարով, ով մշտական չարի գիշեր,  
Բարև գիշեր թող լուսանայ մութ աշխարհին այս մշտատանջ,  
Ով դալիքներ գեռ անըստոյդ, բարև գիշեր, բարև գիշեր:



Սիրտ իմ, չասող էն խօսքն ասա, որ չարիքն էլ պապանձի,  
Երկունքի մէջ մըռընչացող վազրըն ինքն էլ պապանձի,  
Որ հըրարուխ ժայթքող լեռն էլ հըրարուխ ետ կուլ տայ,—  
Որ ապըստամբ Մասիդ առջև թուր-դալիքն էլ պապանձի:



Ինչ էլ ասեմ կընոջ մասին՝ նորից ես կին կը պաշտեմ,  
Հաղարնեբին աչքըս տալով՝ սրտով մէկին կը պաշտեմ,  
Աղբերն էլ են այսպէս, ահա, աչքս ամէնքին է սիրում,  
Բացի մէկից, բացի մէկից, ես ամէնքին կը պաշտեմ...



Այս անդրանիկ Հայոց ցոյցը հին դանակն է իմ երգի,  
Թեկուդ անդէն, բայց յուսարեր նոր բանակն է իմ երգի,  
Հէ՛յ ջան աղբ իմ, ծիլ է տալիս խօսքի Մասին իմ ցանած,  
Վանդակում էլ մըռընչանքի յաղթանակն է իմ երգի...



Նուրբ սմբուլը ցուլի բան չէ, ուլի բան է, իմացիլը,  
Տըղամարդու բան չէ սէրը, մարդու բան է, իմացիլը,  
Ոգուդ վըրայ սիրահարուդ, մարմնամոռաց սէրն է սէր,  
Իրաւ սէրը, ոգուս նըման, անվախճան է, իմացիլը:



Բանաստեղծներ շատ կան, իրաւ, բայց Շիրազը ուրիշ է, հա,  
Ինչքան էլ ճոխ ծագիլի ներկան, իմ երազը ուրիշ է, հա,  
Ա՛խ, ուրիշ է երազներին միակ անհաս բարձունքը սուրբ,  
Հազար ու մի մայր գետեր կան, մայր Արազը ուրիշ է, հա:



Շատ լեզուներ իմացողը եւ Սոկրատ է եւ Յեսու,  
Եւ Չին եւ Հինգ եւ զանդի է, Ֆել սոխակ է եւ հեսու,  
Բայց մայրենին ով չըզիտէ՝ ոչ Յեսու է, ոչ Վարդան,—  
Իւր լեզու էլ թէ գիտենայ՝ աւանակ է անլեզու:



Թէ Խայեամին հաւատայինք՝ ո՞վ էր աշխարհն հերկելու,  
Թէ մեզ անվերջ գինուն տայինք՝ ո՞վ էր գինին երկնելու,  
Խայեամների գինին՝ քաղցած մանկանց աչքից կը քամէ,  
Բայց թէ գինին ցաւ չխեղդէր՝ ո՞վ էր գինի երգելու...



Թէ արծիւ չեմ՝ ինչո՞ւ համար վանդակւած է իմ կեանքը,  
Թէ արծիւ չեմ՝ ինչո՞ւ է խօլ իմ երգերի ճախրանքը,  
Թէ արծիւ եմ՝ արծւիս գահը արծւիս ինչո՞ւ չեն տալիս,  
Չըլինի՞ր թէ վանդակում էլ ինձ խաբում է պատրանքը...



Ինչ էլ անէք՝ իմ անյոյսն էլ երբքս պիտի յոյսին տանի,  
Բախար թեկուզ Հայոց ճամբէն խոտորելով լուսին տան՝  
Իմ ազգն այնքան պիտի ծնի, լաւ իմացիր, եղեռնադործ,  
Այնքան պիտի հսկայանայ, որ Մասիսը ուսին տանի:



Ա՛խ, ցամաքող Սեւանն ընկած՝ դեռ անպատիժ դաւն եմ լալիս,  
Որպէս Վանայ ծովիս կարօտ՝ Սեւան ընկած նաւն եմ լալիս,  
Իմ քրնարը լոկ Մասիս չէ, բիւր են լարերն իմ քրնարի,—  
Յաւն եմ լալիս ողջ մարդկութեան՝ երբ իմ Հայոց ցաւն եմ լալիս:



Չեմ ցանկանում ասուածանալ՝ քանզի էլ չէք հաւատում,  
Հաւատայիք՝ կ'ասուածանար սատանան էլ ապատում,  
Քանզի նոյնիսկ անապատում հովն էլ ասուած կը փնտռէ,  
Այրբւելով կարօտներից՝ սրտիս նրման անպատում...



Մարդ կայ՝ զո՛հ է ճշմարտութեան, մարդ կայ՝ ողջը կը եղծի,  
Մարդ կայ՝ սուրբ է մօր կաթի պէս, մարդ կայ՝ կաթն էլ կը պղծի,  
Մարդ կայ՝ մարդու ամէնն ունի, մարդ կայ՝ ըսուեր է մարդու,  
Մարդ կայ՝ հազիւ մի վայրկեան է, մարդ կայ՝ դարեր կը ստեղծի:



Կին կայ՝ ի սէր մէկի սիրոյ՝ դարեր կ'ընկնի քարէ քար,  
 Կայ էլ՝ փառքի սանդուխք կ'անի իր մարմինն էլ իր համար,  
 Մարտի ութը ցըրե՞ց մութը, թէ աւելի մըթընդեց,  
 Մարմնի սանդուխքն ուր էլ հանի՝ վերջը ինքն էլ կ'ընկնի վար:



Կ'ուզեմ անվերջ, կ'ուզեմ անվերջ, կ'ուզեմ անվերջ թափառել,  
 Տիեզերքից մինչեւ մարդու ու մըջնի մէջ թափառել,  
 Մըջնից մինչեւ մարդը, մինչեւ տիեզերքը անսահման  
 Կ'ուզեմ անվերջ, կ'ուզեմ անվերջ ու անընդմէջ թափառել...



Թէ խոր նայես՝ պողոտայ է սուրբ կածանը իմ երգի,  
 Մարդու բոլոր ճամբէքն ունի նուրբ կածանը իմ երգի,  
 Համամարդու սրտի բոլոր գոյներն ունի երգըս հայ,  
 Հազարագոյն, բիւրագոյն է ծիածանը իմ երգի:



Եղեռնահար Հայոց սիրտը Անիի պէս աւերեց,  
 Ոչլ Հայաստանն՝ անբանակամ ու աղեկէլ՝ աւերեց,  
 Քանդի զինեամ ծովն յօշոտեց անզէն գետին՝ իմ Հայոց,  
 Հայոց վշտից աստեամ ինքն էլ՝ ինձ հետ, կարծես, աւերեց...



Կէս դարեկան իմ դրկում է կէս տարեկան իմ որդին,  
 Թոթովում է ինչ որ ձայներ կէս դարեկան իմ սրտին,  
 Միթէ սա՞ էլ պիտի տեսնի, աւա՞ղ, ինչ որ ես տեսայ,—  
 Գըթա՛, աշխարհ, որ միշտ մընայ քեզ բարեկամ իմ որդին...



Լաւի յոյսով այս աշխարհը քանի զընում վատանում՝  
 Անդերեզման կորչողներն են քանի զընում շատանում,  
 Որսկանին են զրկում բողոքն իմ վիւրաւոր եզնիկի,  
 Աստեամ ինքն է մեղադրեալ, սատանան է դատ անում:



Զըլինի՞ թէ խելագար է այս իմ դարը խելագար,  
 Մարդուց կ'ուզէ մըբուրն հանել այս խաւարը խելագար,  
 Մարդուց վանել մարդ գազանին՝ այն էլ մի դար—վայրկեանում,  
 Ինձ ծընել են հին դարերի բիւր—հազարը, խելագար:



Ա՛խ, երանի Աստուած լինէր, դուժ չէ դարը անասուած,  
 Ամենայայտ լոյսի մէջ էլ մութ է դարը անասուած,  
 Սատանային թաքցնելով՝ Աստուծոյ դէմ են կուռւմ,  
 Խիղճ ու դուժի ճամբէն դոցող խութ է դարը անասուած:



Մենք Մասիսին, Մասիսը մեզ՝ երազում ենք միշտ իրար,  
 Կուզենք իրար հասնել, գրկել, բայց չի թողնում դարը չար,  
 Այսպէս իրար կարօտելով՝ ճերմակեցինք հայ վշտից,  
 Չա՛րն է մեր մէջ անդունդ բացել, թէ՛ ինքն Աստուած, ո՛վ կոյր դար:



Ճակատ-ճակտից՝ ցուլերի պէս՝ մի երկրի մէջ զոյգ երկիր՝  
 Մի ազգի մէջ երկու լեզու, մի երկրի մէջ երկու գեր՝  
 Իրար սեղմել՝ ճգմել կ'ուզեն մէկը մէկին, ո՛վ Աստուած,  
 Ո՛վ սուրբ Մաշտոց, պրկիր դու մեզ, այս դեւից էլ մեզ փրկիր:



Դրսի վերայ յոյս դընողը ի՞նչ կ'իմանայ ո՞ւր կ'երթայ,  
 Այլոց վերայ յոյս դընողը կուլ էլ չերթայ՝ դուլ կ'երթայ,  
 Վեց դարերիս փորձով զիտեմ եւ այս փորձով, Աստուած իմ,  
 Այլոց թըրին յոյս դընողը վերջը այլոց կուլ կ'երթայ:



Կոյսը անոյշ անըրջանք է, թեկուզ ինձ կեանք է կինը,  
 Կոյսն անըրջանք, կոյսը տենչանք, այն ինչ տանջանք է կինը,  
 Իբաւ երբ որ աչքը դուրսն է՝ մահն է կինը քո կեանքի,—  
 Սիրած կոյսը ներշնչանք է, արտաշնչանք է կինը...



Հաւատում եմ, չեմ հաւատում, չեմ հաւատում, հաւատում՝  
 Տատանում եմ երկուսի մէջ, տարուերևում անպատում,  
 Հաւատալըս վրկայ չունի, չըհաւատալս՝ անվրկայ,  
 Ոչ տեսել եմ, ոչ չեմ տեսել՝ իմ Աստուծուն չեմ ատում:



Անմեղիկ են արծիւներըս՝ լորերի պէս իմ Հայոց,  
 Իմ սուրբ Հայոց հնրերի պէս, նորերի պէս իմ Հայոց,  
 Բայց ա՛խ, աւա՛ղ, վանդակած են, մեղեղիններն իմ արծիւ,  
 Շղթայած են սարերի պէս, ձորերի պէս իմ Հայոց...



Հայոց իրձեերն ինձ խելազա՞ր, թէ իմաստուն դարձըրին,  
Յրևած անբուն երամներխս ինձ արծևարոյն դարձըրին,  
Ո՞նց դիմանամ Մասիսներին Հայոց վշտի ծանրութեան,  
Արարատը՝ Հայոց տանիք՝ ինձ տակը սիւն դարձըրին:



Մօրըս պատկերն ինձ յուշում է՝ կարօտակէղ իմացիր,  
Միշտ դերի չի մընայ լեռքդ, որդիս, ինձ պէս դիմացիր,  
Մօրըս ասա՝ ես չհասայ, դու կը հասնես, հաւատա՛,  
Թողն ու ծոցըս պիտի հասնես՝ թէ չհասնես, իմացիր:



Որպէս լեզուն պոկած դնչու՝ չես խօսում՝  
Շատ բան տեսած լուսին, ինչո՞ւ չես խօսում,  
Հայոց՞ վշտից, թէ այլ վշտից ես դեղնեի,—  
Գէթ մի վշտիս մասին ինչո՞ւ չես խօսում:



Թեկուզ հալած արճիճ լցնէք իմ բերանը,— չեմ լրռէ,  
Ինձ տաք ոսկու բաղեշխանը, համվերանը՝ չեմ լրռէ,  
Ինձ էլ մեռցնէք... իմ երդերը աշխարհասփիւռ՝ կը դողան,  
Ես եմ Հայոց դերւած լեռանց յոյս-մերանը՝ չեմ լրռէ...



Վարդանը միշտ սուրբ կը մընայ, եւ կը մտնի Երեւան՝  
Արձան-ձիւռ սմբակի տակ դեռ վասակներ կ'երեւան,  
Պիտի թռչի Մասիսն ի վեր ժայռէ ձին էլ Վարդանի,  
Ժայթքելու են դեռ Վարդանանք, վայ քեզ, վայիս հարեւան...



Երազիս մէջ Չարենցն ասաց՝ դիտե՞ս ինձ ով սպանեց,  
Նա, որ քեզ էլ մահ է տենչում՝ յոյսի մի ծով սպանեց,  
Իր ջին նախանձն իր դէմքին է իմ շիրմի պէս նկարած,  
Յնձա՛, քանզի ինքն իրեն իր նախանձով սպանեց:



Այս ինչե՞ր եմ լրսում, ազդ իմ, կ'ուզեն պեղել Վասակին,  
Հըրեշտակել սատանային ու չքմեղել Վասակին,  
Վասակներ են՝ մանրը, թէ մեծ՝ ովքեր պեղել կը ջանան,—  
Թագի տենչն է ազդից շեղել՝ մի շան փոխել Վասակին:



Մամիկոնեան առիւծն, իրաւ, իր սուրբ վայրում է թաղւած,  
Ոչ քո այրում, Անդեղակոթ, ոչ քարայրում է թաղւած,  
Երբ էլ լինի՝ ուխտի կ'երթանք դերեղմանին սրբավեհ,—  
Աւարայրի մեծ վարդանը Աւարայրում է թաղւած...



Ձէինք բեկէի թէ՛ չորս կողմից հրոսակը չլինէր,—  
Թէ միտքան ազգի մարմնում իր քոսակը չլինէր,—  
Տես՝ որդւնկեր խնձորի որդն իր միջից է, Աստուած իմ,  
Այժմ մերն էր Աւարայրն էլ, թէ վասակը չլինէր...



Կ'ուզէ՞ք ասեմ Մաշտոցն ո՞վ է, Մաշտոցն աչքն է հայ ազգի  
Ձինւած վարդանն ու Տիգրանը վահան-կոպերն են աչքի,  
Հայոց բոլոր բանաստեղծներն իր թարթիչներն են անմեռ,  
Հէքս էլ հազիւ մի թարթիչն եմ արեւաչեայ հըրաչքի...



Ասում են, թէ աղամանդը ճնշումից է դոյացել,—  
Ձեմ զարմանում՝ քանզի ազգըս նորից վեր է խոյացել,  
Հազար դարեայ ճնշումներից, եղեռնից էլ դուրս պրծած՝  
Եօթն ազգերի ճնշումից է աղամանդւած աչք բացել...

(Վերջ)

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԲԱԶ